

Այսու հաճոյքով կը ներկայացնենք եկեղեցւոյս Մխական Խորհուրդի 1959 տարեշրջանի նիւթական ու բարոյական տեղեկատուութիւնը:

Համայնքիս Հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Եղիշէ Վրդ. Կիրիլեանի նախագահութեամբ Մխական Խորհուրդի կազմը կը բաղկանայ ըստ հետեւեալի:

- Տիարք Կիւլպըրդ Մարգարեան, Ատենապետ
- Ճօրճ Հերոսեան, Փոխ-Ատենապետ
- Մանասէ Ճարտարեան Ատենադպիր
- Զարլի Կարապետեան, Փոխ-Ատենադպիր
- Ճան Թօրոմանեան, Գանձապահ
- Բիթըր Նալպանտեան, Հաշուապահ
- Հէրի Սողիկեան, Միջայէլ Խօլլիկեան, Բարգէն Անսպիկեան,
- Առպետ Զաքարեան, Եւ Հայկ Մեսրոպեան, Խորհրդականներ:

Մխական Խորհուրդի անդամներէն ոմանք տարուան ընթացքին կանոնաւոր ներկայ եղան քաղաքիս Բառնեսըլ ավ Զըրչսի ժողովներուն իսկ ուրիշներ այցելութիւններ տուին ծուխիս սգաւոր ընտանիքներուն:

ՀՈՎԻՒՒ ՕԳՆԱԿԱՆ. - Բարեշնորհ Յովհաննէս Սրկ. Գասպարեան հովիւի օգնականի պաշտօնին կոչուեցաւ 1958-ի Յունիսի սկիզբը եւ մէկուկէս տարուան իր պաշտօնավարութեան շրջանին մեծապէս օգտակար եղաւ մեր եկեղեցիին եւ սիրելի դարձաւ մեր ծխականներուն: Յովհաննէս Սրկ. սքանչելի աշակից մը եղաւ հովիւին, որոնք միասնաբար նուիրուեցան եկեղեցւոյս գործերուն լաւագոյն յաջողութեան ու արդիւնաւորութեան համար:

Առաջնորդ Սրբազան Հօր արտօնութեամբ Յովհաննէս Սրկ. արդէն իսկ կը յաճախէ իր դպրոցը ամբողջացնելու համար իր տօթորայի ուսումը Պոսթըն Եռիվէրսիթիին մէջ: Ուրախ ենք որ Յովհ. Սրկ. իր դպրոցական աշխատանքներուն զուգընթաց կը վարէ մեծ ձեռնհասութեամբ Հայ եւ Կիրակնօրեայ վարժարաններու տնօրէնութիւնը եւ եկեղեցւոյս դպրապետութիւնը:

Զ ԵՌՆԱՐԿՆԵՐ

1. ՎԱՐՂԱՆԱՆԸ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ. - Վարդանանց յիշատակի տօնակատարութիւնը մեծ շուքով կատարուեցաւ Հինգշաբթի ֓ետրուար 5ին մասնակցութեամբ Հայ Մարտիրոսաց եկեղեցւոյ: Տօնին առիթով տեղի ունեցաւ երեկոյեան պաշտամունք հաւատացեալներու հոծ բազմութեան մը ներկայութեան: Արարողութեան յաջորդեց շքեղ ճաշկերոյթ մը: Կը նախագահէր հովիւը: Գործադրուեցաւ գեղարուեստական ճոխ ու հետաքրքրական յայտագիր մը: Տիկին Հէյզըլ Էլճանեան երգեց դաշնակի ընկերակցութեամբ Տիկին Այրին Շուշանի: Ներկայացուեցաւ Վարդանանց կեանքէն առնուած թատերգութիւն մը, որուն մէջ բաժին առած էին Բարշ. Յովհ. Սրկ. Գասպարեան, Յարութիւն Գասպարեան եւ Տիկին Ռօզլի Եազըճեան: Բեմին հրաշալի տեսարանը կը ներկայացնէր Վարդանանց փառքը որ պատրաստուած էր Օրդ. էն Կարճեանի կողմէ: Օրուան գլխաւոր ատենախօսն էր յայտնի հրապարակագիր Պրն. Անդրանիկ Անդրէասեան որ յոյժ հետաքրքրական դասախօսութիւն մը ըրաւ:

2. ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍ. - Մխական Խորհուրդը եկեղեցւոյս ենթակայ բոլոր մարմիններու գործակցութեամբ դաշտահանդէս մը տուաւ Կիրակի Յունիս 14ին Լէսթըրի ընդարձակ դաշտավայրին մէջ: Հակառակ օդին աննպաստ ըլլալուն ձեռնարկը յաջող անցաւ:

3. ԵՕԹԱՆԱՍՈՒՆԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ. - Եկեղեցւոյս հիմնադրութեան 70-ամեակի եւ նոր շէնքին օծման 7րդ. տարեդարձի շքեղ տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, Դեկտեմբեր 13ին: Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Տ. Միւռոն Մ. Վրդ. Կրճիքեան որ յատկապէս հրաւիրուած էր սոյն տօնա-

կատարութեան ներկայ ըլլալու համար, առաւօտուն Ս. Պատարագ մատոյց եւ խօսեցաւ հոգեշունչ քարոզ մը: Նոյն օրը երեկոյեան ճաշկերոյթ տեղի ունեցաւ: Գեղարուեստական բաժնին իրենց սիրայօժար մասնակցութիւնը բերին Երիտասարդ Տիկնանց Միութեան անդամուհիները որոնք երգեցին ղեկավարութեամբ Տիկ. Հէյզըլ Էլճանեանի: Տիկին Մարգրիտ Յակոբեան մեներգեց դաշնակի ղեկերակցութեամբ Տիկ. Այրին Շուշանի. իսկ Տիկին Մարի Արոյեան ներշնչիչ արտասանութիւն մը ըրաւ:

Աւուր պատշաճի ուղերձներ ըրին Հոգշ. Տ. Եղիշէ Վրդ. Կիզիրեան, Բարշ. Յովհաննէս Սրկ. Գասպարեան, Տիարք Սեդրակ Տէր Պաղտասարեան, ճօրճ Եաղճեան եւ ճօրճ Հերոսեան: Օրուան սեղանապետութիւնը ձեռնհասօրէն վարեց Միակն Խորհուրդի Ատենապետ Տիար Կիլպըրդ Մարգարեան: Սոյն յիշատակելի տնակատարութիւնը իր վախճանին հասաւ Դոխանորդ Հայր Սուրբին Իսկաման խօսքերով եւ աղօթքով: Այս առիթով տեղի ունեցաւ նաեւ տարեդարձի մոմավառութիւն, որմէ գոյացաւ կոկիկ գումար մը: Խորին շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր նուիրատուներուն:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեան իր հովուական անդրանիկ այցելութիւնը տուաւ Ուստրի համայնքին Յունիս 19-22 Թեմիս Դպրաց Դասերու համագումարին առթիւ: Սրբազան Հայրը Յունիս 19, Ուրբաթ երեկոյեան ժամը 7-ին ինքնաշարժով ժամանեց Մէսէչուսէթ Թրնիայթի թիւ 10 էքսիթը Օպըրն գիւղի մուտքին եւ դիմաւորուեցաւ Քաղաքապետին, Եկեղեցւոյս հովիւին, սարկաւազներուն, Թեմական պատգամաւորներուն, Միակն Խորհուրդին, եւ եկեղեցւոյս կազմակերպութեանց ներկայացուցիչներուն կողմէ: Ուրկէ ոստիկաններու եւ ինքնաշարժներու թափօրով Սրբազան Հայրը առաջնորդուեցաւ եկեղեցի եւ Հրաշափառով մուտք գործեց եւ եկեղեցական կարճ պաշտամունքէ մը ետք տուաւ իր շինիչ պատգամը: Նոյն օրը երեկոյեան Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ եկեղեցւոյս կազմակերպութեանց դիւաններուն հետ եւ ըրաւ կարեւոր թելադրութիւններ:

Կիրակի, Յունիս 21, Առաջնորդ Սրբազան Հայրը պատարագեց եւ քարոզեց մեր եկեղեցւոյ մէջ: Նոյն օրը կէսօրէ ետք ի պատիւ Սրբազան Հօր ճաշկերոյթ տրուեցաւ Հօթէլ Պէնքրօքի մէջ: Սոյն ճաշկերոյթին ներկայ եղան նաեւ օտար եկեղեցական հայրեր, ինչպէս Վէսթըրն Մէսէչուսէթի Եպիսկոպոսական եկեղեցւոյ Առաջնորդ Պիշըբ Բապըթ Հէչի ներկայացուցիչը, Ուստրի Ասորիներու հոգեւոր հովիւը, Հայ մարտիրոսաց եկեղեցւոյ այցելու հոգեւորականը, Քառնսըլ աւ Զըրչսի նախագահն ու գործադիր տնօրէնը: Մէսէչուսէթի Կավըրըրը ներկայացուց Պրն. Բաքի Եաղճեան: Սոյն ճաշկերոյթին վայելեցինք նաեւ ներկայութիւնը Առաջնորդական փոխանորդ Հոգշ. Միւռն Մ. Վրդ. Կրճիքեանին եւ Տիթրոյի գործակից հովիւ Արժ. Տ. Տիրան Բհնյ. փախագեանին:

Առաջնորդ Սրբազան Հօր այցելութիւնը մեր համայնքին համար եղաւ հոգեւոր ցնծութեան ու ուրախութեան առիթ մը:

ՄԻԱՅԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ. - Հոկտեմբեր 25-ի Կիրակին մեր եկեղեցին միացեալ պաշտամունք ունեցաւ Սալիզպըրի Ժողովին վրայ գտնուող չորս ուրիշ եկեղեցիներու հետ քաղաքիս մեծ Օտիթորիումին մէջ: Ներկայ եղան աւելի քան 3000 հաւատացեալներ: Պաշտամունքը տեւեց շուրջ 90 վարկեան որուն կէս ժամը տրուած էր մեր եկեղեցիին: Կեղեցւոյս հովիւ Հոգշ. Տ. Եղիշէ Վրդ. Կիզիրեան մասնակցութեամբ սարկաւազներուն եւ դպրաց դասին կատարեց ձաշու Պատարագ խոր հիացում պատճառելով ներկաներուն: Յաւարտ պաշտամունքի ընդհանուր երգեցիկ խումբը բաղկացած շուրջ 300 հոգիէ ներդաշնակօրէն երգեց Տէրուական Աղօթքը հայերէն լեզուով ղեկավարութեամբ Բարշ. Յովհաննէս Սրկ. Գասպարեանի: Պաշտամունքին մասնակցող միւս եկեղեցիներն էին: Սէնթըրլ Քանկրիկէշընըլ, Ըբվըրթ Մէթրոտիսթ, Ֆըրսթ Պէթիսթ, եւ Թրինիթի Էլիթըրըն:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ. - Թեմիս նիւ Ինկլընտի Շրջանային ժողովը տեղի ունեցաւ Ապրիլ 13ին Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Ամբերկահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Սիոն Արքեպիսկ. Մանուկեանի: Սոյն ժողովին ներկայ եղան նիւ Ինկլընտի Հայց. Եկեղեցւոյ հոգեւոր հովիւները, Թեմական Պատգամաւորները, Միական Խորհուրդներու եւ Եկեղեցւոյ ենթակայ բոլոր կազմակերպութեանց ղեւանները: Սոյն խորհրդակցական ժողովին նկատի առնուեցան կարեւոր հարցեր եւ եղան օգտակար Թելադրութիւններ Առաջնորդարանի զօրացման համար: Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը ժողովէն առաջ ճաշով մեծարեց բոլոր ժողովականները:

ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ. - Թեմիս Պատգամաւորական ժողովը այս տարի գումարուեցաւ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ Հոկտեմբեր 17 եւ 18 օրերուն, նախագահութեամբ Թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեանի: Պատգամաւորական ժողովէն առաջ տեղի ունեցաւ Թեմիս Հոգեւորականաց Համագումարը: Եկեղեցւոյս Միական Խորհուրդը լաւագոյն պատրաստութեամբ հիւրասիրեցին հոգեւոր հայրերն ու Թեմական պատգամաւորները: Կիրակի Հոկտեմբեր 18ին ժողովէն անմիջապէս ետք տրուեցաւ շքեղ ճաշկերոյթ մը գեղարուեստական խնամուած յայտագրով: Բրաւիտէնսէն երէցկիւն Մայրենի Տօնիկեան իր գրաւիչ ձայնով ընտրուած երգերու իրունջ մը հրամցուց. եղան նաեւ աւուր պատշաճի ուղերձներ: Առաջնորդ Սրբազանը տուաւ իր շինիչ պատգամը:

ՅԻՇԱՏԱԿԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ. - Եկեղեցւոյս հովիւի, Միական Խորհուրդի եւ Յանձնախումբի ջանքերով Եկեղեցւոյս երկու մեծ պատուհանները Սթէյն Կլէսի վերածուեցան Մայր Աղաւնի Սողիկեանի եւ Տէր եւ Տիկին Հէրի եւ Մէրի Սողիկեանի նուիրատուութեամբ ի յիշատակ իր ամուսնոյն եւ հօր Գէորգ Սողիկեանի եւ Տէր եւ Տիկին Կարապետ եւ Աղաւնի Թաշճեաններու: Նոյնպէս Տօքթ. Հրանդ Սանթրոյեան շինել տուաւ ի յիշատակ իր ծնողաց Կիրակոս ու Կարգուհի Սանթրոյեաններու: Եկեղեցւոյս յիշատակի բոլոր պատուհաններուն վրայ զետեղուեցան նաեւ նուիրատուներու անունները:

ՄԻԱՏԱՆ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ. - Միատան սենեակները հայ դպրոցի եւ կիրակնօրեայ վարժարանի պատշաճ դասարաններու վերածուելու համար մասնաւոր նորոգութիւններ եղան եւ պաշտօնապէս Սթէյն Ինսթիթըրի (Նահանգի քննիչ) հաւանութիւնն ու արտօնութիւնը առնելէ ետք սկսաւ գործածուիլ հայ եւ կիրակնօրեայ վարժարաններու դասարաններուն համար:

Միատան գրասենեակները կապերտներով օժտեց Տիար Ճօրճ Ժամկոչեան. իսկ պատուհաններու Շէյտերը նուրեց Պրն. Մարտիրոս Զօպանեան: Երիտասարդ Տիկնանց Միութիւնն ու Հայ դպրոցի խնամակալութիւնը նուիրեցին գրասենեակներու գեղեցիկ վարձույրները:

Միատան Մօրթկէյճի համար նուիրատուութիւններ ըրին Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը 1000 տոլար իսկ երիտասարդ Տիկնանց Միութիւնը 1200 տոլար:

ԵԿԵՂԵՑՈՅՍ ՀՈԳԱՏԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ. - Եկեղեցւոյս հոգատար Տիկ. Պայծառ հացագործեանի հրաժարումով Եկեղեցւոյ եւ ծխատան շէնքերու հոգատարութեան գործը յանձնուեցաւ Տէր եւ Տիկ. Ալէքս Բօլվիլի, որոնք կը ստանան շաբաթական 25 տոլար վճարում բնակարանով միասին:

ԴՊՐԱՑ ԴԱՍ. - Դպրաց Դասի անդամներ ու անդամուհիներ կը բերեն իրենց մասնակցութիւնը Եկեղեցւոյս կիրակնօրեայ պաշտամունքներուն եւ ներդաշնակօրէն կերգեն Ս. Պատարագը ղեկավարութեամբ Բարշ. Յովհաննէս Սրկ. Գասպարեանի: Զերմապէս կը գնահատենք իրենց նուիրեալ ծառայութիւնը:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԿԱՐԺԱՐԱՆ. - Կիրակնօրեայ վարժարանի տնօրէնութիւնը

կը վարէ Բարշ. Յովհաննէս Սրկ. Գասպարեան, իսկ փոխ տնօրէնութիւնը Պրն. Պարթեւ Տէր Պաղտասարեան, որոնք վարժարանի անձնուէր ուսուցիչներու հետ կաշխատին վարժարանը դնել ծաղկեալ ու բարգաւաճ վիճակի մէջ: Մեր խորին շնորհակալութիւնն ու անկեղծ գնահատանքը կը յայտնենք տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին:

ՀԱՅ ԴՊՐՈՅ.— Հայ դպրոցը վերաբացուեցաւ Հոկտեմբեր 10ին: Արձանագրուած աշակերտութեան թիւն է 90 6-14 տարեկան: Կը պաշտօնավարեն 4 վճարեալ եւ 3 կամաւոր ուսուցիչներ: Վարժարանը ունի ժրջան ու նուիրեալ խնամակալութեան մարմին մը: Մեր ջերմագին գնահատանքը կը յայտնենք տնօրէնին, խնամակալութեան անդամներուն իրենց օգտակար ծառայութեանց համար:

ՕԳՆՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՎԱՆՔԻՆ.— Առաջնորդարանի հրահանգով Խաչվերացի Տօնին առթիւ մասնաւոր պնակ շրջագայեցաւ Երուսաղէմի համար եւ գոյացաւ կոկիկ գումար մը:

ԺՈՂՈՎՆԵՐ.— Ծխական Խորհուրդը 1959 տարեշրջանին գումարած է Եկեղեցւոյս հովիւին նախագահութեամբ 32 վարչական, 3 խառն 3 անդամական եւ 2 բացառիկ ժողովներ:

ԳՆԱՀԱՏԱՆՔ.— Ծխական Խորհուրդը իր խորին շնորհակալութիւնն ու սրտագին գնահատանքը կը յայտնէ Եկեղեցւոյս Հովիւ Հոգշ. Տ. Եղիշէ Վրդ. Կիզիրեանին, հովիւի օգնական Բարշ. Յովհաննէս Սրկ. Գասպարեանին իրենց նուիրեալ եւ բազմաբնուէն գործունէութեանց համար, ինչպէս նաեւ Եկեղեցւոյս ենթակայ մարմիններուն եւ մեր սիրելի ժողովուրդին որոնց ազնիւ գործակցութեամբ Աստուծոյ փառքին ու իր Եկեղեցիին յաւերժաման համար նուիրուած մեր ջանքերն ու աշխատանքները արդիւնաւոր ընծայուեցան:

Ի դիմաց Ծխական Խորհուրդի

Եղիշէ Վրդ. Կիզիրեան
Յարութեամբ

Մանասէ Ճարտարեան
Առնեսարգիլի

Կիւլաբըր Մարգարեան
Առնեսարգիլի

The Parish Council wishes to gratefully acknowledge the contributions of time, effort, and money by it's many Parishioners during the past year. It is only through such effort that we have grown and will continue to grow in the years ahead.

We are indeed fortunate to have such excellent support from our Auxillary Organizations which are:

- Ladies Auxiliary
- Young Womens Guild
- Men's Club
- Armenian School
- A.C.Y.O.A.
- Choir
- Sunday School

With God's Blessings we shall go forward in this Sacred Cause during the present year.